ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ԳՅՈՒՂԻ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ , գ.Երանոս,
6-րդ փողոց, շենք 8 հեռ.093213407
էլ.փոստ yeranos2@schools.am
N10 18.01.2023թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո՛ պարոն Սարգսյան

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ հայտարարվել է մրցույթ <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի N2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության Քիմիա (11 դասաժամ), Ֆիզկուլտուրա (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի փետրվարի 3-ին՝ ժամը 13^{00}–ին, ժամը 15^{00}–ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի N2 միջնակարգ դպրոցում:
Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստի օրինակը:

Տնօրեն՝ Ա.Գրիգորյան

Digitally signed by GRIGORYAN ASLI 5501780534
Date: 2023.01.18 10:57:37 AMT

Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Երանոս գյուղի N2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Քիմիա (11 դասաժամ),Ֆիզկուլտուրա (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 18-ից մինչև հունվարի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի փետրվարի 3-ին՝ ժամը 13:00-ին, 15:00 ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի N2 միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ. Երանոս 6-րդ փողոց, 8 շենք : Տեղեկությունների համար զանգահարել 093213407 հեռախոսահամարով: